

ՀՄԸՄ Լոնդոն - 30-ամեակ

Այս տարի լրանում է ՀՄԸՄ-ի Լոնդոնի մասնաճիւղի հիմնադրութեան 30-ամեակը: 70-ական թուականներից մինչ այսօր աշխարհում տեղի են ունեցել մեծ փոփոխութիւններ՝ սակայն ՀՄԸՄ-ին յաջողուել է պահել իր ուղղին եւ ոգին: Հարկ է քննել թէ ինչպէս եւ ինչ գործելակերպի բերումով է որ նա կարողացել է գոյատեւել, իսկ ամենակարեւորը այն թէ ինչու պիտի ՀՄԸՄ-ը դեռ շարունակի մնալ այս գաղութում՝ ի խնդիր գալիք սերունդների:



HOMENETMEN
LONDON 1979-2009

ՀՄԸՄ-ի Լոնդոնի մասնաճիւղը ստեղծուեց՝ հայ երիտասարդների հաւաքական եւ վճռական կամքով: Վճռականութիւն՝ որ շարունակում է մինչ այսօր: Միութեան յարատեւումը Լոնդոնում՝ այնքան էլ չի առնչւում Բէյդըն Փաուլ-ի հետ, այլ՝ մեր գաղութի այն անհատների որ աշխատեցին անդադար պահելու միութիւնը: Կամաւոր եւ հաւաքական աշխատանքի ոգին ազդեց հազարաւոր այն անձերի վրայ՝ որոնք անցան միութեան շարքերից: Սերնդէ սերունդ ստանձնեցին ջահը՝ պահպանելու միութեան գոյատեւումը եւ զարգացումը Լոնդոնահայ համայնքում:

ՀՄԸՄ-ը աշխատել է համախմբել երկրագնդի հայ երիտասարդներին սկաուտական շարժման շուրջ: Սակայն այն շատ աւելին է քան պարզ սկաուտական շարժում: Համայնքը պահելու եւ պահպանելու մասին է նրա իմաստը, մի բան՝ որը արմատական տեղ ունի սփիւռքի հայութեան ենթագիտակցութեան մէջ: ՀՄԸՄ-ը միշտ ձգտել է իր անդամներին սովորեցնել կարգապահութիւն, հայրենասիրութիւն եւ պատասխանատւութեան գիտակցութիւն: Լոնդոնի մասնաճիւղը բացառութիւն չի կազմում: Դպրոցի մթնոլորդից դուրս, 5-ից 18 տարեկան անդամներին սովորեցնում են Հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, մշակոյթ եւ գործնական գիտելիքներ: Գիտելիքներ՝ որ օգտակար կը լինի նրանց ապագայ կեանքում եւ անձնական աշխատանքում: Ստաւոր դաստիարակութեան կողքին նաեւ քաջալերում է ֆիզիքական պատրաստութիւնը: Բասկէթբոլը, ֆութբոլը եւ ինքնապաշտպանութիւնը ՀՄԸՄ-ի մարզական բաժանմունքի ստեղծած բազմաթիւ մարզախմբերից մի քանիսն են: Սկաուտները եւ մարզիկները սովորել են եղբայրական ոգու եւ համագործակցութեան կարեւորութիւնը եւ հպարտութեամբ ներկայացնում են ՀՄԸՄ-ը ներայգգային եւ օտար բեմերում:

ՀՄԸՄ-ի Լոնդոնի մասնաճիւղը 30 տարուայ ընթացքին գաղութիս ամենից աշխոյժ եւ գործունեայ ուժն է հանդիսացել: Բաւական է յիշել նրա տարեկան յայտագիրը՝ որը իրագործուում է վարչութեան շուրջը հաւաքուած կամաւոր աշխատողների միջոցով: Սկաուտ ղեկավարները, ինքնական, ստանձնելով երեխաների դաստիարակութիւնը, ամեն շաբաթ տրամադրում են մեծ թւով ժամեր: Այս նուիրածութիւնը չի սահմանափակուում շաբաթ օրերին միայն: Հաճախ նաեւ շաբաթուայ ընթացքին գումարում են ժողովներ քննելու համար իրենց խմբերի ծրագիրները: Ժողովներ վարելը, նրանց ընթացքը եւ պահանջուած կարգապահութիւնը, զարգացում են նրանց ղեկավարական կարողութիւնները, որոնցից նրանք սովորում են շատ աւելին քան կը սովորէին ինչ որ սեմինարներից:

Վերջին 30 տարուայ ընթացքին ՀՄԸՄ-ի Լոնդոնի մասնաճիւղը ունեցել է շատ նուաճումներ: Այժմ անդամների երրորդ սերունդն է որ ստանձնել է աշխատանքների ղեկավարութիւնը: Պահպանելով հանդերձ միութեան սովորութիւնները եւ աւանդութիւնները նրանք այժմեականացրել են աշխատանքները՝ յարմարուելու համար ներկայ պահանջների հետ: Բանակումները շարունակում են մնալ աշխատանքների հիմքում, մասնաւորաբար ամառային տաս օրեայ ընդհանուր բանակումները որ հանդիսանում է տարեշրջանի կարեւորագոյն միջոցառումը: Մարզական խմբերը աշխատում են լաւագոյնս ներկայացնելու ՀՄԸՄ-ին տեղական լիգաներում: Վերջերս ՀՄԸՄ-ի Լոնդոնի մասնաճիւղը արձանագրուել է բարեսիրական կազմակերպութեան կարգավիճակով՝ ամրապնդելու իր կարեւորութիւնը համայնքում:

ՀՄԸՄ-ի աշխատանքը պահանջում է լինել ուժեղ անհատականութեան տէր, պատրաստ՝ զոհաբերելու ժամ եւ համբերութիւն: Սակայն նոյն աշխատանքից քաղած բաւարարութիւնը շատ աւելիով է գեռակշռում դժուարութիւններին: ՀՄԸՄ-ի անդամակցութիւնը իր անդամների համար ժամանակաւոր երեւոյթ չի այլ ընդհանրապէս ամբողջ կեանքի կապուածութիւն: Ստեղծուած ընկերութիւնները եւ յիշողութիւնները նրանց ընդմիշտ կապում են իրար եւ դրանով է պայմանաւորուում միութեան շարունակականութիւնը:

Զպիտի թերագնահատել հաւանքական ոգին: ՀՄԸՄ-ի միջոցառումների բերումով ստեղծուել են զօրաւոր բարեկամութիւններ եւ կապերի այլ գաղութների հայութեան հետ: Վերջին տարիներին ամենակարեւոր իրադարձութիւնը եղել է Հայաստանի անկախացումը եւ նրա ազդեցութիւնը ՀՄԸՄ-ի վրայ: Այժմ, ամեն չորս տարի մէկ, անդամները մէկ շաբաթով մեկնում են հայրենիք՝ աշխարհի չորս կողմից հաուաքուած ՀՄԸՄ-ականների հետ միասին մասնակցելու սկաուտական բանակումի: Այդպիսով ՀՄԸՄ-ը դառնում է կամուրջը իր անդամների եւ նրանց մշակոյթի ու պատմութեան հետ:

Բարեսիրական կազմակերպությունների դիմագրալած դժուարությունները ծանօթ են բոլորին՝ ինչպես ծանօթ է ներկայիս երիտասարդութեան անտարբերությունը:

ՀՄԸՄ-ի Լոնդոնի մասնաճիւղը պիտի շարունակի պահպանել իր պայքարելու եռանդը, շարունակի իր գործունեությունը եւ զարգացումը: Պիտի պահպանի ազգային մշակոյթը, աւանդությունները եւ իր բարձրագոյն նպատակները՝ այն որ սփիւռքում հայութեանը համախմբում է իրար շուրջ՝ պահպանել իր դիմագիծը եւ ինքնությունը:

Գրեց՝ Քոյր Յուրի Սարուխանոֆ

Հայերէնի թարգմանեց՝ Քոյր Արմինէ Գասպարեան